Բանայ խանում էսաց.—Դաւիթ, տիւ յերտիւմ էր էրի. եօթ օր, տարար եօթ տարի, իս մնացի առանց մարդ, քիւ ճամբախ կ'իրիշկիմ։

Էսաց։—Դէհ, քիւ թադարիք տիս, կ'ըլնինք մէյդան, կուինք։

Էնիկն էլ էսաց.—Մէկ սհաթ մոհլաթ տու, էսաց, իմ շիւրիր խագնիմ, ասբաբ կապիմ, իկեամ։

Դաւիթ կապից զԲիւռիկ-Ջալալին վեար Բանայ խանըմը տռան, էսաց.—Զին էստեղ կ'մնայ, իս կ'երթամ գիտ, լեռղկանամ, կեամ, չուր քիւ շիւրիր խագնիս, կեաս։

Էնիկ շիւրիր էխան, մտաւ գիտ՝ մաչ ջիւրուն լեռղկանալու։ Բանայ խանում էլ սերտ կրար չ'իտու[1]), ուր խօր գիւթնը խուփ, ինչ Դաւիթ էնով գիւթան էրաւ, քեառսուն ղիտր պողվատ ը, առից, էթալ քիրէն. փչիլ իտու, կարմրցըցից,—աղէկ ըմ խուփ կարմրցաւ. զխուփ առից, վեար կարմնչին ընցկուն կրակաթրթախ էզար Դաւիթը ջանին, էզար մէջաց,—ծակից, փուրն ինի[2]) էկաւ տիւս։

Դաւիթ էնդեղ մեռաւ. էն մեռաւ—Աստուած ողորմի խոգուն—էն մեռաւ, ձին էնդեղ ծռաւ, ծռակապ կտրից, ինկաւ տիւս, ինչքանդար խովիւ ռաստ իրի, նախրուիթ[3]) ռաստ իրի, տաւար, ձի,—բիրադի կուտուրից, կինաց, կանգնաւ յէռջիւ Խանդիւթ խաթընը տռան։ Խանդիւթ խաթուն էլ էլաւ, իրիշկից, տեսաւ՝ ձին իկիր ի, տէր խիտ չ'կայ։ Էն սհաթ խաբար էրաւ, որ Դաւիթ կուրուսն ի, չկայ։

Զէնով-Ցեովան էլաւ, էնդեղէն կանչից. էնուր ձէն կինաց Հադրբեջան, ինկաւ Մհերի ականջ։

Մհեր էլաւ, ինչքանդար ասքար որ կէր՝ ժողվից, խատ ուր առաւ, էկաւ. առաւ, էկաւ էնդեղ, կեացին Դաւիթի լէշը վերայ, տեսան՝ Դաւիթ սպանած ին։ Ինկան Բեանդիւմահու կարմնջից չուր Իրան, ինչ որ կէր, բիրադի կուտուրիցին, ասին.— Էս մի Դաւիթի փուխ։

---

[1]) Համբերեց։ [2]) Փորի միջով։ [3]) Նախրորդ, նախրչի։